2009 թվականի հունվար ամսվա ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի հունվար ամսվա եկամուտները կազմել են շուրջ 41.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 34.5 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 22.7 եւ 17.8 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 4.7%-ով, ծախսերի գծով՝ 3.9%-ով:

Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 11.8%-ով կամ 5.6 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 10.6%-ով (4.16 մլրդ դրամով) նվազել են հարկերը եւ տուրքերը, 23%-ով (1.4 մլրդ դրամով)՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 83.9%-ը ձեւավորվել է հարկերի եւ տուրքերի, 11.4%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 4.6%-ը՝ այլ եկամուտների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաեւ պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 752.1 մլն դրամ՝ նախորդ տարվա 851 մլն դրամի դիմաց:

2009 թվականի հունվար ամսին պետական բյուջե մուտքագրված հարկերն ու տուրքերը կազմել են շուրջ 35.1 մլրդ դրամ եւ 23.4%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2008 թվականի հունվարի համեմատ նշված եկամուտները նվազել են 10.6%-ով կամ 4.2 մլրդ դրամով:

Հարկերի ու տուրքերի 51.8%-ը ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 18.2 մլրդ դրամ եւ 12.7%-ով կամ 2.6 մլրդ դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերի ավելի քան 12.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 5.7 մլրդ դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 9.3%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 2.4 մլրդ դրամ, որից 594.8 դրամը՝ բենզինի եւ դիզելային վառելիքի, 1.5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից:

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում եւ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 885.1 մլն դրամ, որից 600.2 մլն դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ ակցիզային հարկի մուտքերի ընդհանուր մակարդակը գրեթե չի փոխվել:

Հունվար ամսվա պետական բյուջեի հարկային եկամուտների 11.2%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 3.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 11.6%-ով կամ 512.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ոչ ռեզիդենտ եւ օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների վճարումների նվազմամբ:

2009 թվականի հունվար ամսին ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով հարկերի ու տուրքերի 8.8%-ը: Նախորդ տարվա հունվարի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 15.2%-ով կամ 408.3 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել նաեւ մաքսատուրքի գծով, որը կազմել է շուրջ 2.6 մլրդ դրամ՝ 31.3%-ով կամ 614.4 մլն դրամով գերազանցելով 2008 թվականի հունվար ամսվա ցուցանիշը:

2009 թվականի հունվար ամսվա ընթացքում պետական տուրքից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում ծրագրված մուտքերի 27.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 11.4%-ով կամ 165.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման եւ ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքերի նվազմամբ:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են 1.5 մլրդ դրամ՝ 16.3%-ով կամ 210.6 մլն դրամով գերազանցելով 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է խաղատների գործունեության կազմակերպման, դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման, առեւտրի իրականացման վայր կազմակերպելու, տրանսպորտային միջոցների գազալցման եւ հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման համար գանձվող հաստատագրված վճարների աճով:

Պարզեցված հարկից պետական բյուջե է մուտքագրվել 289.2 մլն դրամ, որը 66.3%-ով զիջել է նախորդ տարվա հունվարի ցուցանիշը՝ պայմանավորված հունվարի 1-ից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ:

2009 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 450.9 մլն դրամ բնօգտագործման եւ բնապահպանական վճարներ: Նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 45.7%-ով կամ 378.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարների նվազմամբ:

Հունվար ամսվա ընթացքում այլ հարկերից պետական բյուջե է մուտքագրվել 550.5 մլն դրամ: Մասնավորապես՝ 87.6 մլն դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 213.8 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 104.6 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 79.9 մլն դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները եւ 64.5 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերը նվազել են 66.4%-ով կամ 1.1 մլրդ դրամով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 4.8 մլրդ դրամ եւ 17.4%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարները նվազել են 23%-ով կամ 1.4 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 2 մլն դրամի պաշտոնական դրամաշնորհներ, որոնք մուտքագրվել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2009 թվականի հունվար ամսին կազմել են 1.9 մլրդ դրամ եւ 36.7%-ով ապահովել եռամսյակային ծրագրային ցուցանիշը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 1%-ով:

2009 թվականի հունվար ամսվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 34.5 մլրդ դրամի ծախսեր, որից 254.2 մլն դրամը՝ պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: Մասնավորապես՝ 35.3 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, -823.6 մլն դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 7%-ով կամ 2.3 մլրդ դրամով: Աճը պայմանավորված է կենսաթոշակների, դրամաշնորհների եւ աշխատավարձի ծախսերի աճով, ինչպես նաեւ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ամսում կազմել են 35.3 մլն դրամ՝ 20%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Ընթացիկ ծախսերից 2.1 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 54.6 մլն դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք համապատասխանաբար 27.5%-ով եւ 48.6%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի

ցուցանիշները: Ծառայությունների եւ ապրանքների ձեռք բերմանը պետական բյուջեից հատկացվել է 746.9 մլն դրամ, որը 24.4%-ով ցածր է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Հաշվետու ժամանակահատվածում 529.7 մլն դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 12.1%-ը: Մասնավորապես՝ 403.5 մլն դրամ տրամադրվել է ներքին, 126.2 մլն դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2008 թվականի հունվարի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերը նվազել են 62.2%-ով կամ 870.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի նվազմամբ: Պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարը կազմել է 418.7 մլն դրամ, որը մոտ կիսով չափ զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: 2009 թվականի հունվար ամսին պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 19.1%-ը կամ 6.8 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որից 2.3 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների, 3.9 մլրդ դրամը՝ այլ ընթացիկ դրամաշնորհների ֆինանսավորմանը: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրը կատարվել է 28.7%-ով, իսկ նախորդ տարվա հունվարի համեմատ աճը կազմել է 24.2%:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի 53.3%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին եւ կենսաթոշակներին, որոնք կազմել են 18.4 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 30.8%-ը: Մասնավորապես՝ 15 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 3.4 մլրդ դրամ՝ նպաստներին: 2008 թվականի հունվարի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն աճել են 15%-ով, իսկ նպաստների գծով՝ նվազել 2.1%-ով:

2009 թվականի հունվար ամսին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են -823.6 մլն դրամ, որից 236.5 մլն դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը եւ 1.1 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: 2008 թվականի հունվարի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 86.3%-ով կամ 1.5 մլրդ դրամով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 59.5%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

2009 թվականի հունվարին ՀՀ պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է 7.3 մլրդ դրամ հավելուրդով: Ընդ որում, ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -4.4 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրները՝ -2.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա հունվարի համեմատ պետական բյուջեի հավելուրդը նվազել է 51.9%-ով, ընդ որում՝ ներքին աղբյուրներից ձեւավորված հավելուրդը նվազել է 65.6%-ով, արտաքին աղբյուրներից՝ ավելացել 25.9%-ով:

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում -1.5 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը: Ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցման արդյունքում հունվար ամսվա ընթացքում 2.9 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները:

2009 թվականի հունվար ամսին ՀՀ պետական բյուջեից արտաքին վարկավորումը կազմել է 2.4 մլրդ դրամ, որը տրամադրվել է ԼՂՀ-ին: Այն 35.2%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Արտաքին պարտավորությունների մարմանը հաշվետու ժամանակահատվածում ուղղվել է 418.8 մլն դրամ, որը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: